ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Բնական գիտություններ 1.1997 Естественные науки

*Կենսաբանություն*

УДК 595.7+591.9

Ա.Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՄԱՐՄԱՐԻԿ ԳԵՏԻ ՀՈՎՏԻ ՄԵՂՈՒՆԵՐԻ ՖԱՈՒՆԱՆ

## 1. Ընտ. Megachilidae, Anthophoridae, Apidae

Մեղուների հետազոտությունը ունի գիտագործնական մեծ նշանակություն, քանի որ նրանք ծաղկավոր բույսերի անփոխարինելի փոշոտիչներ են: Սակայն Հայաստանում մեղուների ֆաունան քիչ է ուսումնասիրված: Կարելի է հիշատակել միայն մի քանի աշխատանքներ [1-8], որտեղ մասամբ ներկայացված է մեր հանրապետության ֆաունան: Այդ բացը լրացնելու համար 1994-1996 թթ. ուսումնասիրել ենք Հայաստանի մի քանի շրջանների ֆաունան: Հետաքրքրություն ներկայացնող գոտիներից մեկը Մարմարիկ գետի հովիտն է՝ լանդշաֆտի ու կենսավայրի բազմազանությամբ, որն էլ պայմանավորում է ֆաունայի հարստությունը:

Ներկայացվող ցուցակը ընդգրկում է 63 տեսակներ, որոնք պատկանում են 20 սեռի: Յուրաքանչյուր տեսակի համար տրվում է տարածվածությունը Հայաստանում, լանդշաֆտային-ստացիալ տեղաբաշխումը, թռիչքի ժամկետները, իսկ որոշ տեսակների համար՝ կերաբույսերը:

Հայաստանի համար նոր տեսակները նշված են մեկ աստղանիշով (*), իսկ Կովկասի համար նոր տեսակները՝ երկու (**):

### Ընտանիք Megachilidae

1. Lithurgus fuscipennis Lep.
Կոտայքի, Վայքի և Երևանի մարզեր: Հանդիպում է կիսաանապատային և տափաստանային գոտիների մշակովի տարածքներում ու գետերի հովիտներում: Հուլիս - օգոստոս:

2. Trachusa bissina Pz.
Կոտայքի մարզ: Գտնվել է լեռնատափաստանային մարգագետիններում, անտառային բացատներում, այգիներում: Հունիս-օգոստոս: Lotus caucasicus:

3. Anthidium cingulatum Latr.
Կոտայքի և Արմավիրի մարզեր, Խոսրովի արգելանոց: Տարածված է տափաստանային մարգագետիններում, այգիներում և քսերոֆիտ նոսր անտառներում: Հունիս-օգոստոս: Vicia sativa:

4. Chelostoma maxillosum L.
Կոտայքի մարզ: Հանդիպում է տափաստանային մարգագետիններում և անտառային բացատներում: Հունիս-հուլիս: Ranunculus sp.:

5. Ch. proximum Schlett.**
Կոտայքի և Երևանի մարզեր, Խոսրովի արգելանոց: Տարածված է կիսաանապատային գետերի հովիտներում, տափաստանային մարգագետիններում և անտառային բացատներում: Հունիս-հուլիս:

6. Heriades truncorum L.

Կոտայքի, Արագածոտնի և Երևանի մարզեր. Խոսրովի արգելանոց: Գտնվել է կիսաանապատային մարգագետիններում, տափաստանային այգիներում, ճանապարհների եզրերին և անտառների բացատներում: Մայիս-օգոստոս: Senecio vernalis:

7. Hoplitis adunca Pz.*

Կոտայքի և Արագածոտնի մարզեր: Հանդիպում է անտառային բացատներում և տափաստանային գետերի հովիտներում: Հունիս-հուլիս: Echium vulgaris:

8. Osmia emarginata Lep.*

Կոտայքի և Արագածոտնի մարզեր: Հանդիպում է լեռնատափաստանային գետերի առափնյա մարգագետիններում և կաղնուտի բացատներում: Հունիս:

9. O. ruf L.

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Տարածված է լեռնատափաստանային գետերի հովիտներում, այգիներում և լեռնային քսերոֆիտ նոսր անտառներում: Մայիս-հունիս: Ranunculus arvensis:

10. Chalicodoma parietinum nestoreum Brulle'

Կոտայքի, Արարատի, Արագածոտնի, Սյունիքի և Երևանի մարզեր, Խոսրովի արգելանոց: Գտնվել է կիսաանապատային և տափաստանային մարգագետիններում, ճանապարհներին, բույսերի քսերոֆիլ լանջերին, ժայռերին, թփուտներում և անտառային բացատներում: Մայիս-հուլիս:

11. Ch. pyrenaicum Lep.*

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Հանդիպում է տափաստանային բույսերի լանջերին: Մայիս-հուլիս:

12. Megachile circumincta Kby.

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Տարածված է տափաստանային մարգագետիններում, գետերի հովիտներում և լեռնային անտառների բացատներում: Հունիս-հուլիս: Vicia villosa:

13. M. nigriventris Scherck

Կոտայքի մարզ: Գտնվել է լեռնաանտառային բացատներում: Հունիս:

14. M. octosignata Nyl.*

Կոտայքի մարզ: Հանդիպում է լեռնաանտառային գետերի առափնյա մարգագետիններում: Սեպտեմբեր-հոկտեմբեր:

15. M. versicolor Smith

Կոտայքի մարզ: Հանդիպում է լեռնաանտառային գետերի առափնյա մարգագետիններում: Հուլիս: Salvia nemorossa:

## Ընտանիք Anthophoridae

16. Tetralonia dufourii Per.*

Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզեր: Գտնվել է այգիներում: Հունիս-հուլիս:

17. Eucera clypeata Erichson

Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզեր, Խոսրովի արգելանոց: Տարածված է լեռնաանտառային բացատներում և կիսաանապատային մարգագետիններում: Մայիս-հուլիս: Vicia sativa:

18. Eucera longicornis L.

Կոտայքի, Արագածոտնի մարզեր, Խոսրովի արգելանոց: Գտնվել է լեռնատափաստանային մարգագետիններում և լեռնաանտառային բացատներում: Մայիս-հունիս: Vicia sativa, Trifolium pratense:

19. E. nigrilabris Lep.*

Կոտայքի մարզ: Հանդիպում է լեռնատափաստանային մարգագետիններում: Հունիս:

20. E. nitidiventris Mocs.

Կոտայքի և Արագածոտնի մարզեր: Տարածված է լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում, լեռնային անտառների բացատներում: Մայիս-հունիս: Lotus sp.:

21. E. Tuberculata F.**

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Հանդիպում է լեռնատափաստանային գետերի ափամերձ հողակտորներում: Հունիս:

22. Hapropoda zonatula Smith

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Գտնվել է տափաստանային մարգագետիններում և գետերի հովիտներում: Հունիս: Salvia nemorossa:

23. Clisodon furcatus Pz.*

Կոտայքի Արագածոտնի և Երևանի մարզեր: Տարածված է կիսաանապատային և անապատային գետերի հովիտներում, թփուտներում, այգիներում և անտառային բացատներում: Հունիս-սեպտեմբեր: Echium vulgare:

24. Amegilla albigena Lep.

Կոտայքի, Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզեր: Հանդիպում է կիսաանապատային և տափաստանային գետերի հովիտներում, այգիներում: Հունիս-սեպտեմբեր: Trifolium repens:

25. Anthophora aestivalis Pz.

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Հանդիպում է լեռնային անտառների բացատներում, լեռնատափաստանային մարգագետիններում և գետերի ափամերձ հատվածներում: Մայիս-հուլիս: Inula britannica, Trifolium sp.:

26. A. parietina F.*

Կոտայքի մարզ և Խոսրովի արգելանոց: Գտնվել տափաստանային մարգագետիններում, ճանապարհներին և լեռնային անտառների բացատներում: Մայիս-հունիս: Ononis arvensis:

27. A. radoszkowskii Fedt.

Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր: Հանդիպում է կիսաանապատային և տափաստանային քսերոֆիտ բույսերի լանջերին: Հունիս-օգոստոս:

28. Eupavlovskia funeraria Smith

Կոտայքի և Վայոց ձորի մարզեր: Գտնվել է տափաստանային մարգագետիններում, ճանապարհների եզրերին և գետերի հովիտներում: Հունիս-հուլիս:

29. Xylocopa valga Gerst.

Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Տավուշի, Սյունիքի և Երևանի մարզեր, Խոսրովի արգելանոց: Հանդիպում է կիսաանապատային և տափաստանային մարգագետիններում, ճանապարհների եզրերին, այգիներում, անտառային բացատներում և քսերոֆիլ նոսր անտառներում: Մայիս-օգոստոս:

## Ընտանիք Apidae

30. Bombus agrorum F.

Կոտայքի, Արագածոտնի, Արարատի, Երևանի և Տավուշի մարզեր: Տարածված է անտառներում և այգիներում: Մայիս-սեպտեմբեր: Vicia, vilosa, Trifolium officinale:

31. B. alboluteus Pall.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մազեր: Գտնվել է լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում: Մայիս-օգոստոս:

32. B. albopauperatus Skor.

Կոտայքի և Տավուշի մարզեր: Տարածված է լեռնային անտառների բացատներում և ենթալպյան մարգագետիններում: Մայիս-օգոստոս: Trifolium sp.:

33. B. alpigenus F. Mor.

Կոտայքի մարզ: Գտնվել է ենթալպյան մարգագետիններում: Հունիս-սեպտեմբեր:

34. B. apollineus Skor.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մարզեր, Խոսրովի արգելանոց: Հանդիպում է լեռնատափաստանային մարգագետիններում: Մայիս-սեպտեմբեր:

35. B. argillaceus Scop.

Կոտայքի, Արագածոտնի, Սյունիքի և Երևանի մարզեր: Հանդիպում է տափաստանային մարգագետիններում: Մայիս-օգոստոս: Astragalus erinaceus:

36. B. cazurroi Vogt.

Կոտայքի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում: Հունիս-հուլիս:

37. B. eriophorus Klug.

Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզեր: Հանդիպում է լեռնային անտառների բացատներում և ենթալպյան մարգագետիններում: Հունիս-օգոստոս: Trifolium pratense:

38. B. georgicus Vogt

Կոտայքի մարզ: Տարածված է լեռնային անտառների բացատներում, լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում: Հունիս-սեպտեմբեր: Lotus tenius:

39. B. handlirschianus Vogt

Կոտայքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր: Հանդիպում է չոր, տափաստանային գետերի հովիտներում, լեռնատափաստանային մարգագետիններում և լեռնային անտառների բացատներում: Մայիս-օգոստոս:

40. B. hortorum L.

Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Վանաձորի, Սյունիքի, Տավուշի և Երևանի մարզեր: Գտնվել է կիսաանապատային գետերի առափնյա մարգագետիններում, տափաստանային և ենթալպյան մարգագետիններում, լեռնային անտառների բացատներում, այգիներում: Մայիս-օգոստոս: Antirrhinum majus:

41. B. incertus F. Mor.

Կոտայքի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է չոր-տափաստանային, լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում: Մայիս-օգոստոս: Verbascum soongoricum:

42. B. jonellus Kby.

Կոտայքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր, Խոսրովի արգելանոց: Հանդիպում է տափաստանային մարգագետիններում: Մայիս-օգոստոս:

43. B. laesus F. Mor.

Կոտայքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզեր: Տարածված է տափաստանային մարգագետիններում և լեռնային անտառների բացատներում: Ապրիլ-օգոստոս:

44. B. lucorum L.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մարզեր: Գտնվել է լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում, այգիներում, լեռնային անտառների բացատներում: Մայիս-սեպտեմբեր: Helianthus annus:

45. B. melanurus Lep.

Կոտայքի մարզ: Հանդիպում լեռնատափաստանային և ենթալպյան մարգագետիններում: Հունիս-օգոստոս: Medicago sativa:

46. B. mlokosievitzii Rad.

Կոտայքի, Գեղարքունիքի և Երևանի մարզեր: Գտնվել է տափաստանային գետերի հովիտներում, այգիներում, ենթալպյան մարգագետիններում, լեռնային բացատներում: Մայիս-սեպտեմբեր: Vicia persica:

47. B. muscorum F.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է լեռնային անտառների բացատներում, լեռնատափաստանային մարգագետիններում: Հունիս-օգոստոս: Medicago sativa:

48. B. niveatus Kriechb.

Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզեր: Տարածված է լեռնատափաստանային մարգագետիններում: Մայիս-օգոստոս: Lotus tenuis:

49. B. eversmaniellus Skor.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր, Խոսրովի արգելանոց: Հանդիպում է լեռնատափաստանային և ենթալպյան մարզավայրերում: Մայիս -սեպտեմբեր:

50. B. portschinskii Rad.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզեր: Գտնվել է լեռնային անտառների բացատներում, ենթալպյան և ալպյան մարզավայրերում: Հունիս-սեպտեմբեր:

51. B. pratorum L.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է տափաստանային մարզավայրերում, լեռնային անտառների բացատներում: Մայիս-օգոստոս: Peganum sp.:

52. B. simulatilis Rad.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր: Հանդիպում է տափաստանային մարզավայրերում: Հունիս-սեպտեմբեր:

53. B. soroeensis F.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Տարածված է լեռնատափաստանային մարզավայրերում և լեռնային անտառների բացատներում: Մայիս-սեպտեմբեր:

54. B. subterraneus L.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է լեռնատափաստանային և ենթալպյան մարզավայրերում: Մայիս- սեպտեմբեր: Trifolium sp.:

55. B. terrestris L.

Կոտայքի և Վանաձորի մարզեր: Տարածված է լեռնատափաստանային և ենթալպյան մարզավայրերում: Հունիս-օգոստոս:

56. B. tristis insipidus Rad.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Գտնվել է լեռնատափաստանային և ենթալպյան մարզավայրերում, անտառների բացատներում: Մայիս-օգոստոս:

57. B. velox Skor.

Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր: Հանդիպում է լեռնատափաստանային և ենթալպյան մարզավայրերում: Հունիս-օգոստոս: Astragalus sp.:

58. B. vorticosus Gerst.

Կոտայքի մարզ: Գտնվել է ենթալպյան մարզավայրերում: Հունիս-օգոստոս:

59. Psithyrus campestris Pz.

Կոտայքի մարզ: Հանդիպում է լեռնային անտառների բացատներում: Հունիս:

60. P. quadricolor Lep.

Կոտայքի մարզ: Տարածված է լեռնատափաստանային մարզավայրերում: Հունիս-հուլիս:

61. P. rupestris F.

Կոտայքի մարզ: Գտնվել է լեռնատափաստանային մարզավայրերում: Հունիս-օգոստոս:

62. P. silvestris Lep.

Կոտայքի մարզ: Տարածված է ենթալպյան և ալպյան մարզավայրերում: Հունիս-օգոստոս:

63. Apis mellifera L.

Ընտելացված է մարդու կողմից, որի հետևանքով հանդիպում է Հայաստանի բոլոր մարզերում և բոլոր գոտիներում: Ապրիլ-հոկտեմբեր:

*Կենդանաբանության ամբիոն* *Ստացվել է 16.10.1996*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Осычнюк А.З., Панфилов Д.В., Пономарева А.А.** Надсемейство Apoidea - пчелиные. - **Определитель** насекомых евр. ч. СССР: Перепончатокрылые, 1978, т. 3, ч. 1, с. 279-519.

2. **Попов В.В.** Перепончатокрылые - Hymenoptera. - Животный мир СССР. 1958, т. V.
3. **Радде Г.И.** Коллекции Кавказского Музея: Зоология. 1899, т. I, с. 444-447.
4. **Схиртладзе И.А.** Пчелиные Закавказья. 1981, с. 5-147.
5. **Схиртладзе И.А.** Определитель пчел (Hymenoptera, Apidae) Кавказского перешейка. 1988, с. 5-31.
6. **Morawitz F.F.** Die Bienen Daghestans-Horae Soc. Ent. Ross., 1873, v. 10, p. 129-189.
7. **Morawitz F.F.** Zur Bienenfauna der Kaukasusländer - Horae Soc. Ent. Ross., 1876, v. 12, p. 3-69.
8. **Morawitz F.F.** Nachtrag zur Bienenfauna Kaukasiens - Horae Soc. Ent. Ross.. 1878, v. 14, p. 1-112.

А. С. АМБАРЦУМЯН

# ФАУНА ПЧЕЛИНЫХ ДОЛИНЫ РЕКИ МАРМАРИК

## 1. Сем. Megachilidae, Anthophoridae, Apidae

### Резюме

Впервые приводится список видов пчелиных (Hymenoptera, Megachilidae, Anthophoridae, Apidae) долины р. Мармарик. Отмечено 63 вида, из них 21 - новые для Армении, а 5 - новые для Кавказа. Для каждого вида указываются распространение в Армении, ландшафтно-стациальное распределение, сроки лёта, а для некоторых - кормовые растения.